

ԼԵՎՈՆ ՄԻՐԻՉԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 155 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
ԱՌԱՐԿԱՅԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԱԹԵՄԱՅԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հեղինակ՝

Անահիտ Գևորգի Հարությունյան
անուն, ազգանուն

«ԼԵՈՅԻ ԱՆՎ. ԹԻՎ 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ղեկավար՝

Մ.Գ.Դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր Արմեն Միշայի Ծատուրյան
անուն, ազգանուն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ	
1.1. Հայաստանի բուսականության բազմազանությունը.....	5
1.2. Բուժիչ, օգտակար և թունավոր բույսեր.....	9
ԳԼՈՒԽ 2. ԴԱՍԱԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ	
2.1. Առարկայի և դասաթեմայի դերը դպրոցում.....	14
2.2. Թեմայի արդյունավետությանը նպաստող էքսկուրսիա.....	15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայաստանը, չնայած իր համեմատաբար փոքր տարածքին, այժմ է ընկնում բուսական համակեցությունների ու բուսատեսակների արտահայտված բազմազանությամբ, որը տարածքի բարդ ֆիզիկաաշխարհագրական պայմանների և ֆլորոգենետիկական տեսակետից նպաստավոր աշխարհագրական դիրքի արդյունք է, 1կմ² վրա հաշվում են ավելի քան 100 տեսակ, որը աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկն է:

Վերջին շրջանում արդյունաբերության զարգացման, աննախադեպ շինարարության ծավալման, ինչպես նաև բնական պաշարների ոչ խնայողական օգտագործման հետևանքով Հայաստանի բուսաշխարհը մեծ կորուստներ է կրել: Դա չի սահմանափակվում միայն առանձին բուսատեսակներով, այլ զանգվածաբար ոչնչանում են գենոֆոնդի բուսական համակեցություններ, ամբողջական ասոցիացիաներ, ֆորմացիաներ և բուսաբանական խմբավորումներ:

Բնաջնջման եզրին են կանգնած անապատային, կիսաանապատային, տափաստանային և ճահճային բուսականության տիպերը, որոնք ընդգրկում են Հայաստանի ֆլորայի շուրջ 25%-ը: Այս իրավիճակից դուրս գալու ելքը հանրապետության բուսատեսակներով հարուստ, առաջնային բուսական համակեցությունների ամենաբնորոշ նմուշային ոչ խոշոր հատվածները պետական պահպանության տակ առնելն է:

Ստեղծված արգելոցները, արգելավայրերը և ազգային պարկերը (ընդհանուր տարածքը կազմում է 218807 հա) այս առումով ի վիճակի չեն ապահովել գենոֆոնդի վերարտադրությունը: Անհրաժեշտ է անհապաղ կատարել Հայաստանի ֆլորայի՝ գենոֆոնդի և գենոֆոնդի նոր, բազմակողմանի փորձաքննություն, որի խնդիրը այետք է լինի գենոֆոնդի պահպանության և վերարտադրության նոր ռազմավարության մշակումը:

Այս ուղղությամբ խրախուսելի գործ է կատարվում ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հայկական ֆլորայի և բուսականության հողամասում, որտեղ զգալի քանակ են կազմում Հայաստանի հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ, մնացորդային և այլ բնորոշ բուսատեսակները (շուրջ 900): Ալայան, մերձալայան և գորգային

բուսականության համար կազմված են առանձին լեռնագանգվածների՝ Արագածի, Կապուտջուղի և Արմաղանի մոդելներ՝ իրենց բնորոշ բուսատեսակներով ու համակեցություններով: Կատարվում է այդ պայմաններին լավ հարմարված և լավ սերմնանյութ տվող առանձին անհատների վերաինտրոդուկցիա (սերմնանյութի վերադարձ բնությանը):

Նշյալով էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է ներկայացնել Հայաստանի բուսականությանը վերաբերվող հիմնական նյութը և դրանց ծանոթացմանը վերաբերող էքսկուրսիաների կազմակերպման նպատակահարմարությունը՝ որպես 12-րդ դասարանում «Կենսաբանություն» առարկայի «Հայաստանի բուսականությունը» դասաթեմայի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու միջոց:

Հետազոտության խնդիրները:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ *խնդիրները*՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Պարզաբանել դասաթեմայի անհրաժեշտությունը:
- Լուսաբանել Հայաստանի բուսական աշխարհը:

Հետազոտության մեթոդները:

- Վերլուծություն,
- Համադրություն,
- Անկետավորում,
- Հարցազրույց,
- Էմպիրիկ, և այլն:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, որոնք իրենց հերթին բաղկացած են ենթագլուխներից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

1.1. Հայաստանի բուսականության բազմազանությունը

Յուրաքանչյուր լեռնային երկրում (Հայաստանում նույնպես) բուսականության հիմնական տիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ: Նրա ուրույն ֆլորան և բուսական ծածկույթը հիմք են հանդիսացել Կովկասի և Հայաստանի բուսաաշխարհագրական շրջանացման յուրահատուկ սխեմաների մշակման համար: Համընդհանուր հավանության է արժանացել երկրագնդի բուսաաշխարհագրական շրջանացման Ա. Թախտաջյանի սխեման (1978), ըստ որի՝ Հայաստանը գտնվում է երկու խոշոր, խիստ հակասական բնույթի՝ Եվրասիրիական և իրանաթուրանական բուսական մարզերի շփման սահմանագծում, որտեղ մասնագետներն առանձնացնում են ուրույն բուսականությամբ չորս բուսական գավառներ՝ պոնտական, հիրկանյան, արմենաանատոլիական և ատրպատականյան¹:

Բուսաաշխարհագրական այդ նահանգների, մարզերի և ենթամարզերի, ինչպես նաև երկրի բնապատմական պայմանների բազմազանության շնորհիվ նրա ֆլորան ձեռք է բերել արտակարգ հարուստ և խայտաբղետ տեսակային կազմ՝ շուրջ 3500 բարձրակարգ անոթավոր բույսերով: Տեսակների քանակով ծաղկավոր բույսերին չեն զիջում նաև ջրիմուռները, մամուռները և քարաքոսերը, որոնց տեսակային կազմը դեռևս ամբողջությամբ բացահայտված չէ: Գոյություն ունեն ֆլորայի ներթափույց հարստությունը բնորոշող այլ ցուցանիշներ ևս, որոնք բնութագրվում են զուտ տեղական (աբորիգեն) տեսակների և մնացորդային (ռելիկտային) բուսատեսակների առկայությամբ:

¹ Մելքունյան, Գալստյան Մ. Բնապահպանության հիմունքները: Երևան, 2010թ.

Խումբ	Տեսակների թիվ	Էնդեմիկ տեսակների կամ ենթատեսակների թիվ
Անոթավոր բույսեր	3555	106
Մամուռներ	395	-
Ջրիմուռներ	388	-
Քարաքոսեր	300	-
Ընդամենը	4638	106

Հայաստանում ջրիմուռները քիչ են ուսումնասիրված: Կենսաբազմազանությունը ներկայացված է 388 տեսակով, որոնք հիմնականում պատկանում են կանաչ, դիատոմային, կապտանտառներկանաչ և դեղնանտառներկանաչ ջրիմուռներին:

Հայաստանի գրեթե բոլոր մարզերի ջրամբարներում, լճակներում, գետափերին, երբեմն նաև հողում տարածված են կանաչ, կապտականաչ, դիատոմային և այլ ջրիմուռներ: Տարբեր լճերում, այդ թվում նաև Սևանա լճում ջրիմուռները առաջացնում են ջրի «ծաղկում», որն զգալիորեն վատացնում է ջրի որակը:

Հայաստանում հայտնի է քարաքոսերի 290 տեսակ, ընդ որում ավելի հիմնովին ուսումնասիրվել է Սևանի ավազանը, ուր հանդիպում է 190 տեսակ:

Ըստ կենսաձևերի Հայաստանում գերիշխում են կեղևանման քարաքոսերը (մոտ 40%), որոնց մեծ մասը բնակվում են քարերի վրա: Կան նաև տերևանման, թփանման և ումբիլիկատային ձևեր:

Անոթավոր բույսերը ներառում են բարձրակարգ բույսերի խմբերը. Հայաստանում հաշվում են ավելի քան 3500 տեսակ, որը կազմում են Կովկասի ֆիտոբազմազանության շուրջ 50%-ը:

Հայաստանում հանդիպում է մամռանմանների 430 տեսակ տեսակ (մոտ 100-ը Կովկասում հանդիպում են հազվադեպ): Ամենատարածված տեսակներն են՝ տորտուլա գյուղականը (*Tortula ruralis*), գրիմիա օվալաձևը (*Grimmia ovalis*), թելամամուռ արծաթափայլը (*Bryum argenteum*), թելամամուռ ճմաձևը (*Bryum caespiticium*), հոմալոտեցիում Ֆիլիպեն (*Homalothecium philippeanum*), մարշանցիա

բազմաձևը (*Marchantia polymorpha*) և այլն: Հանդիպում են բոլոր լեռնային գոտիներում և բուսական համակեցություններում²:

Հայաստանում տարածված գլխավորապես միջին լեռնային և անտառային շրջաններում: Առավել ուսումնասիրված տերևացողունային մամուռների դասը ներկայացված է 347 տեսակներով: Նշվածներից 108 տեսակը հազվագյուտ է: Գետնամուշկեր հանդիպում է 2 տեսակ՝ սելագինելա շվեյցարականը (*Selaginella helvetica*) ամենատարածված տեսակն է, որը հանդիպում է Հյուսիսային Հայաստանի խոնավ մերձալպյան ճահիճներում:

Հայաստանում հայտնի է ձիաձեռերի՝ 6 տեսակ՝ ձիաձեռ ընկղմված (*Equisetum fluviatile*), ձիաձեռ ձմեռող (*Equisetum hyemale*), ձիաձեռ ճյուղավորված (*Equisetum ramosissimum*), ձիաձեռ դաշտային (*Equisetum arvense*) և այլն:

Ձիաձեռները տարածված են հանրապետության համեմատաբար խոնավ անտառային և մարգագետնային շրջաններում և հանդիպում են գերխոնավ գետահովիտներում, առուների եզրերին և գետափերին, երբեմն ավազոտ տեղերում ու թփուտներում:

Պտերանմաններ ներկայացված է 38 տեսակներով³:

Հայաստանի ֆլորայում մերկասերմերը ներկայացված են չափազանց աղքատ՝ ընդամենը 9 տեսակներով, այդ թվում՝ 5 գիհի, 1 սոճի, 1 կենի և 2 էֆեդրա: Հանրապետության դեկորատիվ տնկարկներում հանդիպող մերկասերմ ծառատեսակների մեծ մասը օտարածին է՝ ներմուծված այլ բուսաաշխարհագրական տարածաշրջաններից:

Ծածկասերմեր (ծաղկավոր բույսեր) ներակայցված է տեսակային կազմով և բազմազանությամբ, Հայաստանում տարածված է շուրջ 3015 տեսակ:

Էնդեմիկ բույսեր.

Առաջին անգամ Հայաստանում է նկարագրվել բույսերի 400 տեսակ, որոնցից 185-ը տարբեր ժամանակներում հայտնաբերվել է նաև հարևան երկրներում, իսկ մնացած 115-ը հանդիպում է միայն Հայաստանում: Հայաստանի առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող էնդեմիկներից են Հայաստանի

² ՀՀ օրենքը Բուսական աշխարհի մասին

³ Սվաճյան Կ. Կենսաբանության դասավանդման մեթոդիկա: Երևան. 1957թ.

արուսենին, նաիրյան նշենին, Թախտաջյանի կաթնուկը, Թամամշյանի օշանը, Ուրարտուի ցորենը, Տիգրանի թանթրվենին, Մաղաքյանի ստելերոպսիսը և այլն: Մնացորդային բույսերի մեծ մասը՝ ունաբին, կենին, սոսին, արջատիլենին, խնկենին, գիհին, գայլահատը, մր տավարդը, պարիյակը, սովորական բաղեղը և այլն, ծառեր ու թփեր են: Կան նաև մնացորդային խոտաբույսեր՝ ծովոսպը, սպիտակ և դեղին ջրաշուշանները, ենթալպյան բարձրախոտերը, բոլոր տեսակի պտերները, ոչխարի շուղախոտը և այլն: Հայաստանը երկրագնդի այն սակավաթիվ անկյուններից է, որտեղ առատ են նաև մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն: Միայն վայրի զուտ տեղական տանձենիների քանակը Հայաստանում 18 է, մոշենիներինը՝ 13, սոխերինը՝ 20, և այլն:

Ըստ Ն. Վավիլովի սխեմայի (1931)՝ Հայաստանն իրավամբ համարվում է հասկավոր հացաբույսերի առաջացման բնօրրաններից մեկը Առաջավոր Ասիայում: Այդ բույսերից շատերի նախորդները կամ մոտ ձևերը մասնակցել են մշակաբույսերի առաջացմանը, մյուսները ծագումնաբանական տեսակետից մոտ են կանգնած նրանց և կարող են օգտագործվել (կամ օգտագործվում են) նոր, ընտրասերումնային, հիվանդությունների ու վնասատուների նկատմամբ դիմացկուն, բարձր բերքատու և երաշտաու ցրտադիմացկուն սորտեր ստանալու համար:

Հայաստանում պահպանվել են նաև անցյալ երկրաբանական ժամանակաշրջանների բազմաթիվ բույսերի մնացորդներ՝ բրածո բույսեր: Դրանք օգտագործվում են ապարների հասակի որոշման, նստվածքակուտակման պայմանների բացահայտման, ցամաքային ու ծովային հասակակից ապարների համադրման, հնակլիմայի վերականգնման նպատակով:

Հայաստանի տարածքում բրածո բույսերի մնացորդներ կան Տավուշի և Կոտայքի մարզերում, Երևանի շրջակայքում (Մուշավան, Արգիշտի)՝ պալեոգենի նստվածքներում: Դրանց համալիրներն աչքի են ընկնում իրենց հազվագյուտ տեսակային կազմի բազմազանությամբ և առատությամբ: Շիրակի (Սարիար գ.), Սյունիքի (Ագարակ, Սիսիան ք-ներ, Նոր

Արևիկ, Լիճք գ-եր և այլն), Գեղարքունիքի (Գավառ ք.) մարզերի՝ պլիոցենի նստվածքներում հայտնաբերվել են մերկասերմ և ծածկասերմ բույսերի, դիատոմային ջրիմուռների և այլ մնացորդներ: Հայաստանում մինչ այժմ հայտնի բրածո ֆլորաներից ամենաերիտասարդը Նուռնուսինն է (Կոտայքի մարզ)՝ ներկայացված լավ պահպանված եղեգի կոճղարմատներով, իսկ ամենահինը՝ Ջերմանիսինը (Հայաստանի Արարատի մարզի տարածքում, այժմ՝ ապաքնակեցված), որն ընդգրկում է մեզոզոյան դարաշրջանի պտերների և ասեղնատերևավորների մնացորդներ:

1.2. Բուժիչ, օգտակար և թունավոր բույսեր

Հայաստանի բուսական աշխարհը շատ առանձնահատուկ է և բազմատեսակ: Լինելով տարածքով փոքր երկիր՝ Հայաստանն առանձնանում է բուսական աշխարհի հարստությամբ և բազմազանությամբ:

Բուժիչ և օգտակար հատկություններով բույսեր

Հայաստանի ֆլորայի տեսակային կազմի մոտ 10 տոկոսը հանդիսանում են դեղաբույսեր: Ժողովրդական բժշկության մեջ վաղուց լայնորեն օգտագործվում են դժնիկի (Rhamnus), սգնու (Crataegus), գիհու (Juniperus), մասրենու (Rosa), սրոհունդի (Hypericum), ծորենու (Berberis) և այլ ցեղերին պատկանող բազմաթիվ ներկայացուցիչներ:



Դեղաբույսեր

Ցավոք, դրանց հավաքը տարեց տարի ավելանում է, և արդեն անհրաժեշտություն է առաջանում բարձրաձայնել դրանց քանակի նվազման փաստի մասին:

Դեղաբանական հատկություններ ունեն նաև Հայաստանում աճող 122 տեսակի մակրոսնկեր:

Թունավոր բույսեր

Հայաստանում քիչ չեն նաև թունավոր բույսերը: Այդ բույսերը արտադրում են թունավոր նյութեր, որոնք կուտակվում են ինչպես բույսի բոլոր մասերում (բանգի,

արջընկույզ, ընձախոտ և այլն), այնպես էլ առանձին օրգաններում (ծիրանի, նշի, սալորի, բալի և այլ վարդագգիների դառը կորիզներում)⁴:

Բույսերի թունավոր հատկությունները պայմանավորված են նրանցում պարունակվող ֆիզիոլոգիական ակտիվ նյութերով՝ ալկալոիդներ, գլիկոզիդներ, սապոնիններ, էթերայուղեր, խեժեր, աղաղանյութեր, օրգանական թթուներ և այլն: Կենդանիները շրջանցում են այդ բույսերը, չեն ուտում: Բայց ավաղ, լինում են թունավորման դեպքեր բնակչության շրջանում, հատկապես սիրողական բուսահավաքներով զբաղվողների մոտ:

Սովորաբար տեղի բնակչությունը լավ ճանաչում է թունավոր բույսերը, գիտեն դրանց կիրառման եղանակները՝ եռացնում են որոշ ժամանակ, մշակում են և կիրառում, իսկ որոշներից էլ հեռու մնում: Թունավոր բույսեր ազդում են կենդանի օրգանիզմների կենտրոնական նյարդային, սիրտանոթային և մարսողական, շնչառական համակարգերի և այլ օրգանների վրա:

Որոշ թունավոր բույսեր արտաքինապես նման են ուտելի բույսերին, ինչն էլ շփոթմունք ու թունավորումների պատճառ է հանդիսանում:

Թունավոր բույսերից մատնոցուկը, ընձախոտը, բծավոր գինազոխը, ոջլաղեղմը մահամորմը, բանգին, մոլեխինդը, դանձլամերը, իշակաթնուկը և այլն:

Շատ թունավոր բույսեր, ի շնորհիվ իրենցում պարունակվող նյութերի, հանդիսանում են դեղաբույսեր:

Ոչնչացման վտանգի առաջ կանգնած բույսերը

Հայաստանի ֆլորայի անթավոր բույսերի 452 տեսակ ներառված է Հայաստանի Կարմիր գրքի երկրորդ հրատարակության մեջ: Դա կազմում է ֆլորայի մոտ 12 %-ը: Դրանք ունեն պահպանման կարիք:

ՀՀ բույսերի կարմիր գրքում ներառված բույսերի տեսակներին տրվել են հետևյալ կատեգորիաներ՝ կրիտիկական վիճակում գտնվող տեսակ՝ CR, վտանգված տեսակ՝ EN, խոցելի տեսակ՝ VU, վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ՝ NT, տվյալների անբավարարություն՝ DD, քիչ մտահոգող տեսակ՝ LC :

⁴ Верзимин, Методика припадавания биологии .М.1975г.

Կարմիր գրքում գրանցված տեսակներից են՝ Նոնեա բազմագույն (Nonea polychrome), Հիրիկ նեղգծային (Iris lineolate), Հիրիկ նրբագեղ (Iris elegantissima), Սզնի պոնտական (Crataegus pontica), Դորոնիկում Բալանգայի (Doronicum balanseae), Գազ Մասսալսկու (Astragalus



Կարմիրգրքային բույսեր

massalskyi), Հոդմաձաղիկ գորտնուկային (Anemone ranunculoides), Ջանգակ ազգակից (Campanula propinqua), Մատնունի ծիրանավոր (Potentilla porphyrantha), Արիստոլոխիա վրացական (Aristolochia iberica), Ջրաշուշան սպիտակ (Nimphaea alba), Մկնաստի Ռոզենի (Scilla rosenii) և այլն:

Կենսաբազմազանության պահպանությունը Հայաստանում հիմնականում իրականացվում է բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ), որտեղ կենտրոնացված է ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60-70 %-ը, այդ թվում՝ հազվագյուտ, կրիտիկական վիճակում գտնվող, վտանգված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Ուտելի բույսերը

Դարեր շարունակ բնակչությունը օգտագործել է կենսապաշարները սննդի մեջ, որպես վառելիք, շինանյութ, դեղամիջոց և այլն:

Հայաստանի հարուստ ֆլորայի մասն են կազմում ուտելի բուսատեսակները: Դեռ հնադարից հայ ժողովուրդն իր սննդակարգում կիրառել է վայրի բույսեր և դրանց օգտագործման ավանդույթները փոխանցել է սերունդներին: Հայաստանի ուտվող սնկերը ներկայացված են 290 տեսակով: Առավել շատ օգտագործվում են սովորական ականջասունկը (Pleurotus ostreatus), մարպապետնային շամպինյոնը (Agaricus campestris), մանուշակագույն ոտիկով լեպիստան (Lepista personata), շեկլիկը (Lactarius deliciosus) աղվեսասունկը (Cantharellus cibarius):



Ուտելի բույսեր

Ուտելի խոտաբույսերը՝ մոտ 300 տեսակ, օգտագործվում են ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված վիճակում (եփված, թթու դրած և այլն): Տապակած վիճակում օգտագործում են սննդի մեջ սիբեխը (*Falcaria*), ծնեբեկը (*Asparagus*), շրեշը (*Eremurus*), մանդակը (*Astrodaucus*), շուշանը (*Cherophyllum*), ծսապաշարը (*Capsella*), եղինջը (*Urtica*) և այլն:

Թթու դրած օգտագործում են բոխին (*Hippomarathrum*), ծնեբեկը (*Asparagus*), մանդակը (*Chaerophyllum*) և այլ ցեղերի տեսակները:

Հայաստանի ֆլորան հարուստ է նաև վայրի պտղա-հատապտղատուներով՝ շուրջ 120 տեսակներ: Առավել արժեքավոր են ընկուզենին (*Juglans*), տիլենին (*Corylus*), տանձենին (*Pyrus*), խնձորենին (*Malus*), հոնենին (*Cornus*), մոշենին (*Rubus*), հաղարջենին (*Ribes*) և բազմաթիվ այլ տեսակներ:

Հայաստանում շատ բուսատեսակներ հանդիսանում են լավ մեղրատուներ՝ շուրջ 350 տեսակ և լայնորեն տարածված են բոլոր լանդշաֆտային գոտիներում: Մեղրատուներին են պատկանում՝

- պտղատու ծառատեսակներից ծիրանենի, սալորենի, դեղձենի, կեռասենի, բալենի, խնձորենի, տանձենի և այլն,
- անտառային ծառատեսակներից՝ ուռենի, թխկի, կաղնի, չիչխան, ցաքի, լորենի և այլն,
- մարգագետնային խոտաբույսերից հատկապես կարելի է նշել շրթնածաղկավորների, թիթեոնածաղկավորների, վարդագլխների ներկայացուցիչներին՝ կատվադաղձ, աբեդախտո, ուրց, առվույտ, եղեսպակ, փրփրուկ և այլն:

Հայաստանում շատ են կերային բույսերը՝ շուրջ 2000 տեսակներ: Առավել արժեքավոր են կորնպանի (*Onobrychis*), երեքնուկի (*Trifolium*), առվույտի (*Medicago*), աղվեսապու (*Alopecurus*) ցեղերին պատկանող տեսակները:



Հայաստանում աճող եթերայուղատու բույսեր տեսակները:

Հայտնի են նաև բազմաթիվ վիտամինատու, դաբադանյութեր պարունակող և խեժատու բույսեր:

Եթերայուղատու բույսերի նկատմամբ հետաքրքրությունը տարեցտարի աճում է կապված դրանցից ստացված եթերային յուղերի օգտագործման բնագավառների զարգացման հետ: Դրանք օգտագործվում են օժանելիք և խնամքի միջոցներ պատրաստելիս, դեղագործության, սննդի արդյունաբերության, լիկյորների և այլ ոգելիչ խմիչքների պատրաստման ժամանակ:

Դարերի ընթացքում հոտավետ և եթերայուղային բույսերը կիրառվել են ոչ միայն սննդի և բուսաբուժության մեջ, այլև կատարվող կրոնական ծիսակատարություններում՝ Սրբալույս մյուռնի պատրաստման մեջ:

Այսօր խոտային թեյերի արտադրանքը մեծ թափ է ստացել Հայաստանում: Թեյի համար հավաքվում է Ուրց (Thymus), Դաղձ (Mentha), Ուրցադաղձ (Ziziphora), Խնկաձաղիկ (Origanum), Պատրինջ (Melissa), Զիվան (Cephalaria) և այլն:

**ԳԼՈՒԽ 2. ԴԱՍԱԹԵՄԱՅԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ**

2.1. Առարկայի և դասաթեմայի դերը դպրոցում

«Կենսաբանություն» առարկան միտված է կենսաբանությանը առնչվող հետաքրքիր և հարուստ ուսումնառության փորձառություն ապահովելու միջոցով սովորողների մոտ ձևավորել գիտական գրագիտություն և առողջ ապրելակերպ, որպեսզի նրանք դառնան ժամանակակից հարափոփոխ, գիտելիքահեն հասարակության լիարժեք անդամներ և ցկյանս սովորողներ՝ հետաքրքրված գիտությամբ, տեխնոլոգիաներով և պատրաստ իրենց հետագա ուսումնառությանը կամ կարիերային կենսաբանությանն առնչվող բազմազան ոլորտներում⁵:

Կենսաբանությունը բնական գիտություն է, որը ուսումնասիրում է կենդանի օրգանիզմները և կենսական գործընթացները: Այն հսկայական նշանակություն ունի յուրաքանչյուր մարդու կյանքում շնորհիվ իր բազմաթիվ կիրառությունների, որոնց թվում են առողջ ապրելակերպը, բժշկությունը, գյուղատնտեսությունը, բնապահպանությունը, դատափորձագիտությունը և մարդու կյանքին անմիջականորեն առնչվող բազմաթիվ այլ ոլորտներ:

«Կենսաբանություն» առարկան սովորողներին հնարավորություն է տալիս հետազոտելու կենդանի օրգանիզմների կառուցվածքը, ֆունկցիաները, բազմացումը, աճն ու զարգացումը, տարածվածությունը, էվոլյուցիան և փոխազդեցությունը անկենդան աշխարհի հետ: «Կենսաբանությունը» նաև ապահովում է մարդու օրգանիզմի հիգիենայի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերումը և նպաստում է առողջ ապրելակերպի ձևավորմանը: «Կենսաբանության» ուսումնասիրության ընթացքում սովորողները նաև ծանոթանում են կենսաբանության բազմաթիվ կիրառություններից առավել կարևորներին, քննարկում են կենսաբանության նվաճումների ունեցած ազդեցությունը մարդու կյանքում և դրանց հետ կապված էթիկական, սոցիալական և տնտեսական հարցերը, տեղեկանում են կենսաբանական գիտելիքի հետ կապ ունեցող մասնագիտություններին:

⁵ Հանրակրթության պետական չափորոշիչ, Հավելված N2, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի 439-Ն որոշման:

«Կենսաբանություն» հնարավորություն է տալիս ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ և դառնալ տեխնոլոգիական աշխարհի պատասխանատու և ինքնավստահ քաղաքացիներ, ովքեր ունակ են գիտությանը առնչվող հարցերում ձևավորել սեփական փաստարկված դիրքորոշում⁶:

2.2. Թեմայի դասավանդման արդյունավետությանը նպաստող էքսկուրսիա

Էքսկուրսիան աշակերտներին շրջապատող աշխարհին ծանոթանալու գործողություններից մեկն է: Էքսկուրսիայի ընթացքում աշակերտը կարող է դիտել և հասկանալ բնական երևույթները, սեզոնային փոփոխությունները բնական միջավայրում, տեսնել և վերլուծել, թե ինչպես են մարդիկ փոխում բնությունը՝ կյանքի պահանջներին համապատասխան, և ինչպես է նրանց ծառայում բնությունը, ինչպես նաև մարդու աշխատանքը⁷:

Էքսկուրսիան պլանավորելու համար հիմնական միջոցառումներն են՝

- Էքսկուրսիայի թեման՝ Բուսականություն
- Էքսկուրսիայի նպատակը՝ ուսումնասիրել բույսերը
- Էքսկուրսիայի առաջադրանքները՝ ծանոթանալ բույսերին
- Էքսկուրսիայի վայրը՝ Նաիրյան
- Մանկավարժի աշխատանքը...

Էքսկուրսիայի ընթացքում աշակերտները առիթ ունեցան տեսնել՝ Արագյուղում գտնվող ջերմոցը, որտեղ կար Հայաստանում նոր մշակվող բույսեր, ինչպես նաև ծանոթ բույսեր:

Բնական կոսմետիկայի «Նաիրիան» ընկերությունն իր լաբորատորիան և արտադրամասը հիմնել է Կոտայքի մարզի Արագյուղում: Հայաստանում բնական կոսմետիկայի արտադրության ոլորտում այս բրենդը առաջինն է: Այն նպաստում տեղական էկո-համակարգի բարելավմանը, ինչպես նաև օգնում Արագյուղի բնակիչներին ներգրավվել բիզնեսի աշխատանքներին:

⁶ Землянская Е. Н., Теория и методика воспитания школьников: учебник и практикум для СПО. М., издательство Юрайт, 2019. – 57 с.

⁷ Зотов Ю.Б. Организация современного урока М.1984г.

Էքսկուրսիայի ընթացքում, երբ աշակերտները ընդհանուր գծերով ուսումնասիրում են բուսական համակեցությունները, դրանց տեսակային բազմազանությունը, ապա նպատակահարմար է առաջադրել հետևյալ հարցը՝. Ի՞նչ կլինի, եթե ոչնչանա բուսական համակեցությունը: Դրա բազմաթիվ հետևանքներից բացի (թթվածնի քանակի պակասում մթնոլորտում, սննդի աղբյուրների կորուստ, կենդանիների բնակատեղերի ոչնչացում, մարդու հանգստավայրերի կորուստ և այլն): Հարկավոր է նշել նաև տարբեր արժեքավոր նյութերի հարուստ աղբյուրների կորստի մասին: Օրինակ՝ անտառ համակեցությունում կան բազմաթիվ դեղաբույսեր: Անտառի ոչնչացման դեպքում, ոչնչանում են դեղերի աղբյուր հանդիսացող շատ դեղաբույսեր: Չէ՛ որ դեղորայքային թողարկման ցուցակում նշված է, որ դեղերի 45 %-ը ստանում են ծաղկաբույսերից, 2 %-ը՝ սնկերից և բակտերիաներից (անտիբիոտիկներ). 8 %-ը ունի կենդանական ծագում, 18 %-ը՝ անօրգանական և միայն 27 %-ը ստանում են քիմիական եղանակով:

Պետք է ընդգծել, որ բուսական աշխարհի պաշարները առայժմ լրիվ բացահայտված և ուսումնասիրած չեն և արգելոցների ու արգելավայրերի ստեղծումը պայմանավորված է ն՛ դրանով, ն՛ բուսական համակեցությունների ու կենդանական տեսակների պահպանությամբ:

Աշակերտները պետք է պատկերացում ունենան հազվագյուտ և անհետացող տեսակների նկատմամբ ձեռք առնվող միջոցառումների մասին:

Աշակերտներին պետք է պատկերացում տալ Հայաստանում ստեղծված արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկի մասին, վերջին տասնամյակում Հայաստանում ընդունված «Բնության և պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքները», «Անտառային օրենսգիրքը», «Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքը», «Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենքը» և մի շարք այլ օրենքների ու օրենսդրական ակտերի մասին⁸:

⁸ Ասատրյան Լ. Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Երևան; Արտագրես 2007

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն ավարտական աշխատանքը, հետազոտության և վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները:

Հայաստանի բուսական աշխարհը տարատեսակ է և յուրահատուկ: Այն պահպանելու համար կայուն զարգացման հայեցակարգը պետք է ներդնել թե՛ մարդկանց առօրյայում, թե՛ տնտեսության զարգացման հիմքում: Օրինակ, հաճախ թեյաբույսերի արտադրության համար բույսերի հավաքը կատարվում է անգրագետ, քառսային, չեն պահպանվում հավաքի կանոնները: Չի կարելի մի տարածքից հավաքել երեսուն տոկոսից ավել տվյալ բույսից, քանի որ շատ կարևոր է բույսի վերարտադրության համար սերմերով բազմացումը:

Հասարակության հետագա զարգացումը պետք է դարձնել հնարավորինս կայուն: Կայուն զարգացման հիմնաքարը գիտելիքն է և մարդկանց վերաբերմունքը բնության նկատմամբ: Բուսական աշխարհի հանդեպ հոգատար վերաբերմունքը պետք է դասավանդվի վաղ տարիքից: Այս հարցում շատ կարևոր դեր են խաղում էքսկուրսիաներն ու քայլարշավները, որոնք օգնում են աշակերտներին ճանաչել հայրենի ֆլորան և ֆաունան, ընկալել մարդու և բնության կապը, սովորել մաքուր պահել շրջակա միջավայրը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նորմատիվ իրավական ակտեր

1. ՀՀ օրենքը Բուսական աշխարհի մասին
2. ՀՀ օրենքը Էկոլոգիական կրթության մասին
3. ՀՀ օրենքը Մթնոլորտային օդի պահպանության մասին
4. Հանրակրթության պետական չափորոշիչ, Հավելված N2, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի 439-Ն որոշման:

Մասնագիտական գրականություն

1. Մելքումյան, Գալստյան Մ. Բնապահպանության հիմունքներ: Երևան 2010թ.
2. Սվաճյան Կ. Կենսաբանության դասավանդման մեթոդիկա: Երևան. 1957թ.
3. Ասատրյան Լ. Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Երևան; Արտագրես 2007
4. Մարուխյան Ռ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները: Երևան 2006թ.
5. Верзимин, Методика припадавания биологии .М.1975г.
6. Зотов Ю.Б. Организация современного урока М.1984г.
7. Землянская Е. Н., Теория и методика воспитания школьников: учебник и практикум для СПО. М., издательство Юрайт, 2019. – 57 с.